

ԱՐԳԱԿԱՆ

ՎՈՅՎՈՎՈՎԵՆԵՐ



Յ. ԲՈՒՄԱՆԵՆՔ.

ԵԿԱՐԵՑ Գ. ՕՐԻՑԵԼՈՅ.

# ԱՐՄԱՆԻ ՎԱՇԱՐԱԿԱՆ ԵՐ:



Մի օր Զբղջիկն ու ծայն եկան  
թէ՝ եկ դառնանք վաճառական։  
Ասին ու խելք խելքի տրւին,  
հաւան կացան, պայման դրրին։  
ըայց՝ արի տես... որ փող չունեն։  
Շատ միտք արին, թէ ինչ անեն,  
վերջը եկան Փլշի մօտը,  
ընկան նրբա ձեռն ու ստը,  
ու մուրհակով,  
շահով կարգով,  
փող վեր առան քաւականին,  
ինչքան պէտք էր իրենց բանին։



1587



Զիղջր մընաց, տրնպահ դառաւ,  
ճայր բոլոր փողերն առաւ,  
առաւ նըստեց նաւի միջին,  
հասաւ Մըսըր, Զինումաշին,  
Ֆարս, Հընդըստան,  
Արաբստան...



Եւ թանկաղին քիրմանի շար  
 Էլ մարգարիտ, զըմբուխտ ու լալ,  
 հնդու խուրմա, փըստա, բաղամ,  
 եւ... որ մէկի անունը տամ.  
 Ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,  
 առատ-առատ նաւը լցրեց.  
 Նաւը լցրեց հազար բարով  
 ու ետ' եկած ճանապարհով  
 ուրախ-ուրախ տուն էր գալիւ



Ճամփին ծովում սարսափելի  
 ալեկոծում, մըրրիկ երաւ,  
 զարկեց, տարաւ ապրանք ու նաւ,  
 Միայն սովորեար ճայր էնօր  
 աղատւեցաւ մերկ ու տրկլոր:  
 Ազատւեցաւ — փառք իր Ասծուն,  
 բայց ինչ որդութ խեղճը զայ տուն.  
 զայ — ինչ ասի պարտքատէրին,  
 հնց երևայ իր ընկերին...  
 Ընկերն էնտեղ՝ դուռը կտրած,  
 աչքը ճամփին, վիզը ծրոտձ,  
 համրում է օրն օրի վըրայ  
 թէ՝ մեր ճայր երբ պիտի զայ...  
 Երկար նայեց,  
 ճամփին պահեց,  
 շատ լաւ ու վատ երազ տեսաւ,  
 մինչև պարտքի օրը հասաւ  
 ու՝ մուրհակի թուզմբը ձեռին,  
 Փուշը տընկւեց կրտեր ծէրին

— «Ե՞յ, բարեկամ, ինչ բանի էք.  
Էլ չէք ասում թէ պարտք ունէք...  
Գործ բըռնեցիք, հօրս ողորմի,  
ետ տըւէք դէ փողը հիմի.  
Թուղթ էք տըւել՝ վախտ իմացէք,  
ամօթ, արուռ, ահ ունեցէք...  
Թալան հօ չի... մեղք եմ ես էլ...  
Ախպէր, էսպէս բան էք տեսել.  
ոսկի տայ մարդ իրեն ձեռով,  
չըկարենայ առնի զօռմվ...  
Սրանից ետոյ դէ արի գու  
ու ձեռ մեկնի աղքատ մարդու...»

Գորդոռում էր ողջ թառակում,  
հայիոյում էր, խայտառակում.  
ամեն մարդ էլ, ով որ լըսում,  
հէնց մի բերան էն էր ասում:

— «Ա՞յ ամօթ ձեզ, Զըղջիկ ու ձայ.  
ինչ ենք լըսում.—վայ, վայ, վայ, վայ.  
անունները վաճառական  
ու էս տեսակ խայտառակ բան...  
վայ, վայ, վայ, վայ,  
Զըղջիկ ու ձայ...»

Զըղջիկն էսպէս միշտ լըսելիս  
սիրտը բերնով դուրս էր գալիս:  
Բարկանում էր իրեն մըտքում,  
անիծում էր, չըքում, թըքում.

— «Այ քու տումը քանդւի, ա' ձայ,  
այ զու դառնաս Գըլրողի փայ.

էս ինչ բան էր, որ զու արիր,  
զլուխս էս ինչ փորձանք բերիր...»

Ու խընդրում էր ամեն անզամ.

— «Մի նեղանար, Փուշ բարեկամ,  
շատ ես կացել

կաց մի քիչ էլ.

Թուղթ ստացայ երէկ ձայից,

թէ դուրս եկայ Արաբիայից.

որտեղ որ է՝ շուտով կըգայ,

դեռ մի բան էլ աւել կըտայ...»

— Ես չեմ ուզում աւելն, ախպէր,  
կանխիկ համրած իմ փողը բեր.




շահ էք գըրել.  
վախտ էք գըրել.  
ինչ գըրած ա, էն եմ ասում,  
ձեզնից աւել բան չեմ ուզում.  
— «Զէ, աղա Փուշ,  
թէ վաղ, թէ ուշ,  
Փողն իր կարգին, շահն իր կարգին,  
իսկ պատիւղդ... ես իմ հոգին...  
ես յոյս ունեմ... ասենք պարտ ենք...  
բայց չէ ախար մենք էլ մարդ ենք...  
Զէ, քու արածն ով մոռանայ,  
իր Աստւուածն էլ նա կուրանայ...»

Խեղճը էսպէս լեզու ածաւ,  
շատ յոյս տըւաւ, շատ խոստացաւ,  
շատ սուտ ասաւ պարտքատէրին,  
շատ ըսպասեց իր ընկերին.  
բայց ընկերը չըկայ, չըկայ:  
— «Էս ինչ ցաւ էր, Աստուած վըկայ.  
ինչ իմ բանն էր՝ մըտայ մէջը,  
որ խայտառակ լինեմ վերջը...  
ինչպէս պըրծնեմ ես կըրակից,  
էս ահազին պարտքի տակից,  
էլ ինչ ասեմ,  
նաց ըսպասեմ.  
նա ե՞րբ կը գայ, ինչ իմանամ,  
որ ջուրն ընկնեմ... հւմ մօտ դընամ...»






Շատ միտք արաւ,  
դէս դէն թրռաւ,  
ինչ որ ունէր տանը, հազին,  
ողջ հաւաքեց, տրւաւ պարտքին,  
ցիփ մերկացաւ,  
Էլ չըպըրծոււ:  
Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,  
թևեր առաւ, ինքն էլ փախաւ,  
փախաւ, կորաւ, որ էլ էնպէս  
դատարկ, սընանկ ու սևերես,  
ոչ պատահի պարտքատէրին,  
ոչ երևայ լոյս աշխարհին:



Այնունետե իր նամուսից,  
Զրոջիկը մերկ, փախած լուսից,  
ցերւ կները գէս դէն թագչում,  
Գիշերն է միշտ մըթնում թրոչում,  
որ չերեայ իր թայ-թոշին,  
ոչ պարտքատէր աղա-Փուշին:



Ճայն էլ ծովում,  
ճշում, ծրւում,  
ջուրն է մրտնում,  
դուրս է պրրծնում,  
թեկին տալիս,  
ման է գալիս,  
թէ մի գուցէ բախտը բանի,  
կորուստն էլ ետ ջըրից հանի:



Իսկ Փուշն, արդէն յոյսը հատած,  
ճանկ ու ատամ սուր պատրաստած,  
կողքովս ով որ անց է կենում  
քաշում է փէշն ու հարցընում  
թէ չեն տեսել մէկն ու մէկին,  
էն լիրք ծային կամ Զըղջիկին.  
ու էն օրից մինչև օրս էլ  
մէկը մէկին դեռ չեն տեսեր



Ա 2

ՄԱՆԿԱԿԱՆ ՐԱԴԱՐԱՆ-  
ԵՐԱԾՈՒՅԻՆ. ԻՇԽ. Մ. ՄՅՈՒՄԱՆԵՍԻՆ.

Հ 35  
Կ Պ Պ Ա Կ

1909